

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատում 2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ստացվել է 807, իսկ նախորդ հաշվետու ժամանակահատվածից փոխանցվել՝ 237 բողոք (փոխ. 2021թ.,այդ թվում՝ 137 վարույթ ընդ. և փոխ. 2021թ.), այսինքն ընդհանուր 1044 վճռաբեկ բողոք, որոնցով բողոքարկվել է 589 դատական ակտ:

Համեմատության կարգով նշենք, որ 2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ստացվել է 847, իսկ նախորդ հաշվետու ժամանակահատվածից փոխանցվել՝ 245 (փոխ. 2020թ.,այդ թվում՝ 116 վարույթ ընդ. և փոխ. 2020թ..) բողոք, այսինքն ընդհանուր 1092 վճռաբեկ բողոք, որը 48-ով ավելի է 2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ներկայացված բողոքների թվից:

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատում 2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ստացված 807 բողոքներից 797-ը բերվել է ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի կայացրած դատական ակտերի դեմ, իսկ 10-ը՝ նոր հանգամանքի հիմքով: Նախորդ հաշվետու ժամանակահատվածից փոխանցված 137 բողոքներից 132-ը բերվել է ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի կայացրած դատական ակտերի դեմ, իսկ 4-ը նոր հանգամանքի հիմքով:

Վերը նշված 1044 բողոքներից 235-ը վերադարձվել է՝ սահմանելով ժամկետ թերությունները շտկելու համար, 57-ն ընդունվել է վարույթ, 25-ը թողնվել է առանց քննության, 564-ով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, իսկ 2-ով վերանայման վարույթի հարուցումը մերժվել է: 161 բողոքի ընթացքը 2022 թվականի հունիսի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Համեմատության կարգով նշենք, որ 2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ստացված 1092 բողոքներից 270-ը վերադարձվել է՝ սահմանվելով ժամկետ թերությունները շտկելու համար, որը 35-ով ավելի է 2022 թվականի առաջին կիսամյակին վերադարձված բողոքների թվից, 72-ն ընդունվել է վարույթ, որը 15-ով ավելի է 2022 թվականի առաջին կիսամյակին վարույթ ընդունված բողոքների թվից, 39-ը թողնվել է առանց քննության, որը 14-ով ավելի է 2022 թվականի առաջին կիսամյակին առանց քննության թողնված թողնված բողոքների թվից, իսկ 497-ով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, որը 67-ով պակաս է 2022 թվականի առաջին կիսամյակին վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժած բողոքների թվից:

212 բողոքի ընթացք 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ եղել է անավարտ, որը 51-ով ավելի է 2022 թվականի առաջին կիսամյակի դրությամբ անավարտ մնացած բողոքների թվից:

2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում վարույթ ընդունված 57 և 2021 թվականից փոխանցված 137 բողոքներից`

- 10-ը մերժվել է
- 11-ը բավարարվել է ամբողջությամբ և օրինական ուժի մեջ է թողնվել - ստորադաս դատարանի դատական ակտը
- 8-ը բավարարվել է ամբողջությամբ և ուղարկվել է ստորադաս դատարան՝ նոր քննության
- 2-ով բավարարվել է մասնակի, բեկանվել և փոփոխվել է
- 5-ով բավարարվել է, բեկանվել ,փոփոխվել
- 5-ով բավարարվել է մասնակի և ուղարկվել է ստորադաս դատարան՝ նոր քննության /բողոքներից մեկը ներկայացվել է հիմնարար խախտման հիմքով/
- 5-ով բողոքը բավարարվել է, ստորադաս դատարանների ակտերը բեկանվել, քրեական հետապնդումը դադարեցվել է՝ վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ և քրեական գործի վարույթը կարճվել է
- 1-ով բողոքը բավարարվել է մասնակի, ճանաչվել է իրավունքների խախտման փաստը, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումները թողնվել է օրինական ուժի մեջ, հիմք ընդունելով ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը
- 1-ով վճռաբեկ բողոքը նոր երևան եկած հանգամանքի հիմքով վերանայվել, վերանայման արդյունքում բողոքը մերժվել է՝ հիմք ընդունելով ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը
- 1-ով բողոքը բավարարվել է մասնակի, ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայվել, ստորադաս դատարանների ակտերը բեկանվել և փոփոխվել են
- 1-ով վճռաբեկ բողոքը բավարարվել, ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանվել, ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում ճանաչվել է անմեղ և արդարացվել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ

- 1-ով վճռաբեկ բողոքը բավարարվել, ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանվել, ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում ճանաչվել է անմեղ և արդարացվել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ
- 1-ով բողոքը բավարարվել է մասնակիորեն, ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայվել, ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանվել և փոփոխվել է, ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում ճանաչվել է անմեղ և արդարացվել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ
- 1-ով բողոքը բավարարվել է, ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայվել, ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանվել են, ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում ճանաչվել է անմեղ և արդարացվել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Փաստորեն 2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից վարույթ ընդունված բողոքներից 42-ով բողոքները ամբողջությամբ կամ մասնակի բավարարվել են, իսկ 11-ով՝ մերժվել: Արդյունքում, **53 բողոքով կայացվել է 51 դատական ակտ:**

Համեմատության կարգով նշենք, որ 2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում վարույթ ընդունված բողոքներից 40-ը՝ ամբողջությամբ կամ մասնակի բավարարվել են, իսկ 7-ը՝ մերժվել: Այսինքն, 48 բողոքով կայացվել է 45 դատական ակտ:

ՀՀ ՊԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԳՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում բերված 1044 բողոքներից 264-ը ներկայացվել է ՀՀ գլխավոր դատախազության կողմից /ներառյալ փոխանցվածները/, որից 24-ը ընդունվել է վարույթ, 17-ը վերադարձվել է թերությունները շտկելու համար ժամկետ սահմանելով, 3-ը թողնվել է առանց քննության, 157-ով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, իսկ 63-ի ընթացքը 2022 թվականի հունիսի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Վարույթ ընդունված 41 բողոքներից /ներառյալ փոխանցվածները/, այսինքն 24 բողոքներից, 16-ը բավարարվել է ամբողջությամբ, 7-ը մերժվել է, 2-ը բավարարվել է մասնակի, իսկ 16-ի ընթացքը 2022 թվականի հունիսի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Համեմատության կարգով նշենք, որ 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության կողմից ներկայացված 169 բողոքներից վարույթ ընդունվել է 37-ը, որից 19-ը բավարարվել է ամբողջությամբ կամ մասնակի, 1-ը մերժվել է, վերադարձվել է 14-ը, առանց քննության թողնվել 1-ը, իսկ վարույթ ընդունելը մերժվել է 96-ը: 2021 թվականի առաջին կիսամյակի դրությամբ վարույթ ընդունված անավարտ գործերի թիվը նույնպես եղել է 16:

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

Բերված 1044 բողոքներից 780-ը ներկայացվել է դատավարության այլ մասնակիցների կողմից /ներառյալ փոխանցվածները/, որից 33-ն ընդունվել է վարույթ, 22-ը թողնվել է առանց քննության, 2-ով մերժվել է վերանայման վարույթի հարուցումը, 218-ը վերադարձվել է ժամկետով, 407-ով վճարել բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, իսկ 98-ի ընթացքը 2022 թվականի հունիսի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Վարույթ ընդունված 42 բողոքներից /ներառյալ փոխանցվածները/, այսինքն 33 բողոքներից, 15-ը բավարարվել է ամբողջությամբ, 9-ը բավարարվել է մասնակի, 4-ը մերժվել է, իսկ 14-ի ընթացքը 2022 թվականի հունիսի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Համեմատության կարգով նշենք, որ 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում դատավարության այլ մասնակիցների կողմից ներկայացված 923 բողոքներից վարույթ է ընդունվել 35-ը, որից 21-ը բավարարվել է, իսկ 6-ը մերժվել: 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ վարույթ ընդունված անավարտ գործերի թիվը եղել է 8, որը 6-ով պակաս է 2022 թվականի հունիսի 30-ի դրությամբ անավարտ մնացած գործերի թվից:

